Ծուշանիկ Կուրղինյան

Ընկճվածը

Լինում են ժամեր— աշխարհն ես ատում,
Ատում ես մարդկանց, բողոքում բախտից՝
Ձանձրույթը ճակտիդ, հոգնած ու տրտում՝
Չես գտնում հնար փախչելու վշտից:

Թվում է սիրող սրտերից իսպառ
Ջնջվում ես անհետ ու սիրտդ կրծում
Մի խուլ նախանձոտ կսկիծ անբարբառ,
Սրտամաշ կասկած մտքիդ բռնանում:

Ա՜հ, թշվառակա՛ն, մաղձից կուրացած,
Հենց այդ ժամերին սուս կուլ ես գնում
Կյանքի հոսանքին թևերիդ ծալած՝
Մոռանում դու քեզ, իդեալի երդում:

Ու ստոր ընկճման գործում տխրալի
Տեսնելով ազնիվ իղձերիդ մարում—
Փոքրոգի անձեր մատներում տանջանքի՝
Ու դառը զղջման արտասուք թափում:

1906